



## ՏՕՄԱՍՏՈՒՆ ԿԱՆԵԳՑԸ

Մին օր Շահ-Արքասը դերվիշու շորեր ա կյենում, տէն կյամ անրան երգիիրը շոռ կյամ: Քյինամ ա տըեսնում մին շենում մին կնեզ ցորենը կտրեն յիրա մըեկնալ ա, քշտին մին ճըխնուկ տնգալ, չտ ճըխնուկը վըստանեն նոմնան կապալ ա, մաշկեն էլ մին խնեցե կապալ, աշ ու ծախ ընդյաներեն էլ մին-մին ուրուրուց վըեր տիրալ, խոխեթյը մաշին նի կապալ, ուրուրուցներան էլ քող ա կապալ, հըղլակ ըրալ, քցալ ծըռքըերեն, թիլին կծեգյը փադին պըտկըներան ա կապալ, վըստերը էրկու ծընորավ վըստանեն դաթավն անց կըցըրալ, բիղի ուրան ա քաշում. համ էլ էրկու խոխան ուրուրուցըն մաշին ուրուրում ա, մաշկեն յիրա խնեցեն ա հարում, կտրեն յիրա մըեկնած ցորեն էլ ճըխնուկը տուրծիր տալավ ծըտըերան պահում ա, համ էլ վըստան կյործում:

Շահ-Արքասը էն կնզանը մուտանում ա, ասում.—Վըեր մին օրդակ զարկեմ, կըկարկե՞ս թեփուս: Էտ կնեզն ասում ա.—Ես տրաստան ըմ, զարկե կյան:

Շահ-Արքասը քյինամ ա ուրան պալատը, թախտըն նստում, նազիր-վեզիրին ծեն տամ կոշտը, ասում.—Էս քեր ըրազումըս մին դերվիշ ըմ տըեսալ, չտ դերվիշն ինձ ասալ ա.—Ժուղուվուրթեն հետե յըս քոն իլալ, հեռուտ մուտացալ ա, էրկումըտ իրեք ա տըեռալ, երեսումերկու ախալըեր ըն իլալ, նահանք էլ քըզանա տէն ըն եկալ, իրեք օր քեզ մոհլաթ ըմ տամ, մտածե, թիի, թավըեր տիժըրանաս՝ գյիղասվուշ, թա հինչ ըմ ասում, կըբյինաս՝ էսհինչ շենումը մին վըստան կյործող կնեզ ա ապրում, նա քեզ քյինմագյ կանե:

Նազիր-վեպիրը Շահ-Ծրբասըն պըլատան տուս ըն կյամ-  
թինամ: Շատ ըն մտածում, Շահ-Ծրբասին «արազը» կարում  
չըն դիլդան, թա հինչ ա: Տահանք թիխնամ ըն էտ կնգանը կոշտը:  
էտ կնեղյը նազիր-վեպիրան մին քանակ վըեսկե յա յոր օնում, ռա-  
րազը նազ անում: Ասում ա:—Դերվիշը վըեր ասալ ա ժուղու-  
վուրթին հետեւ յըս քոն իլալ, տրանավ օզում ա ասըն, վըեր Շահ-  
Արբասը պըռավալ ա, էրկունն իրեք ա շինալ, տրանավ օզում ա  
ասըն, վըեր էրկու վըենն օնըն, մին կըվազան էլ իլվիցրալ ա,  
հեռուն մուտըրալ ա, տրանավ էլ օզում ա ասըն, վըեր աշկերը  
լավ շի տըեսնում, երեսուներկու ախպըերթը տուս կյալն էլ կըր-  
թընն ա, վըեր արտին վըեր ա տըեռալ:

Նազիր-վեպիրը կյամ ըն Շահ-Ծրբասին կոշտը, հինչ վըեր  
էտ կնեղյն ա ասալ, լոին նազ անում: Շահ-Արբասը կլիխ ա ին-  
դինամ, վըեր տա մենակ էն կնեղյը կըկարե գյիղն, խոսում շի:

Մին օր էլ Շահ-Ծրբասըն քաղաքը օրիշ յերգիրան մին  
դերվիշ ա կյամ, մին ճըժ քաշում, նի մննում մաշը, հիշքան փող  
ըն տամ, ճըժան տուս շի կյամ: Խարարը հըսցընում ըն Շահ-  
Ծրբասըն, Շահ-Արբասն էլ ուրան նազիր-վեպիրը ղարկում ա էտ  
կնգանը կոշտը, նազ ըն անում, վըեր իստի մին դերվիշ ա եկալ,  
ճըժ քաշալ, նի մտալ մաշը, տուս շի կյամ:

Էտ կնեղյն ասում ա:—Տա շատ տիժար պեն ա, դերվիշին  
երգիրին թաքավըերը կըու ա օզում, տրա հետեւ յա դերվիշին  
ղարկալ, ինձ հարուր վըեսկե տուվիքյ, քյինամ դերվիշին ճըժան  
տուս օնընմ, հերան երգիրը ղարկեմ:

Նազիր-վեպիրն էտ կնգանն ասածը քյինամ ըն Շահ-Ծրբասին  
ասում, Շահ-Արբասը հարուր վըեսկեն ղարկում ա էտ կնգանը, սա  
յել մին թուփսարկան ա հերան նուտըրավը տիհնում մին յիշիգյու  
մաշի, մին կոնդ էլ տողան յոր օնում, հզե ինում, քյինամ դերվի-  
շին ճըժեն ըռաշին մին ճըժ էլ ինքը քաշում, նի մննում մաշը,  
մաշին նըստում: Դերվիշը տրա ճըժեն մաշը մին կոնդ խստոր ա  
թող անում, էտ կնեղյն էլ տրա ճըժեն մաշն ա մին կոնդ սողան  
քյունմ: Տրանա ետը դերվիշը տրա ճըժը մին հափուռ կորեկ ա  
ծում, էտ կնեղյն էլ թուփսարկանն հերան նուտըրավը տուս ա օ-  
նում, լոին օտում ըն, մինն էլ չըն թողում:

Դերվիշը ճըժան տուս ա կյամ, էլ դիրետ եշում լի, հզե յա  
ինում, քյինամ հերան երգիրը:

Տրանա ետը Շահ-Արբասին մարթիքյն էտ կնգանը հըսցնում  
ըն, թա էն խստորավը նան կորկավը դերվիշը հինչ ա՝ ուզեցալ

ասըի, էտ կնեղյին էլ ասում ա.—Խստորը վրեր քցալ ա ճըժեն  
մաշը, տրանավ ուզեցալ ա ասըի, վրեր մըեր երգիրը ծըզըրա  
կըռե ա օզում, ես էլ սողանը վրեր քցալ ըմ ուրան ճըժեն մաշը,  
տրանավ ես նրան ըսկըցրալ ըմ, վրեր մունք էլ կըկարենք ծըեր  
ծըլտան կլանք. կորեկը վրեր ածալ ա ճըժեն մաշը, ուզեցալ ա  
ասըի, վրեր էս կորկեն մնան անհաշե զորք տոնս կօնենք ծըզը-  
րա, ես էլ թոփսորկանն ուրան ճուտըերավը վրեր տոնս ըմ կալալ,  
կորեկը լոխ կերալ ըն, ուզեցալ ըմ ասըեմ, վրեր մըեծան մինչեւ  
կումուրը լոխ տոնս կըկլանք, բու զորքըտ էտ կորկեն մնան ճին-  
շինք, մինն էլ լընք թողել, հոմցը էս թոփսորկանն ուրան ճու-  
տըերավը կորեկըտ լոխ կերեն, մինն էլ մի թուղեցեն:

